



Armenian Research & Academic Repository



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

The licensor cannot revoke these freedoms as long as you follow the license terms.

Under the following terms:

- **Attribution** — You must give appropriate credit, provide a link to the license, and indicate if changes were made. You may do so in any reasonable manner, but not in any way that suggests the licensor endorses you or your use.
- **NonCommercial** — You may not use the material for commercial purposes.

14648

14649

14650

14651

14652

14653

1. Մի բանի խոսք Յովսէփ Եֆենդեանցի
վերայ Քիֆուս 1872
2. Սարգսի Ա. «Սահակ Պարթև կամ Հայրապետ
ՄԵՈյ Կ. Պոլս 1869
3. Հերբուճե պատկերի վայրագանութեանց
Մաթթեա կարճուկա 1861
4. Աբել Միրբարեանց: Հայոց սգի բազմազան
փեանք: Մուքուա 1862
5. Մեր Մեղիքերիցներ: Մի համարտոս իսկայք XIX դարի
իսկ իզգարականության վրայ: Քիֆուս 1874
6. Ասորիւյանց Ստ. «Հայ Բի պատմարականութեան
տղայոց: Միֆուս 1859

347.6

Մ-67

9 (47-9-25)

ՀԱՅՈՑ ԱԶԳԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

ՄԻՋԻՆ ԳԱՐԵՐԻՆ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ

Գրեց ԱՔԷԼ Ա. ԵՊԻՖԱՆՆԻ ՄԷԼԻՄԵՐԵԱՆԳ:

Հրատարակում է ԵՊԻՖԱՆՆԻ ՄԷԼԻՄԵՐԵԱՆԳԸ

Հրատարակչի և տպագրիչի անունը



72-0020

Ի ՄՈՍԿՈՎԵ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԼԱԶԱՐԵԱՆ ՀԵՄԱՐԱՆԻ ԱՐԻՒՆԵԱՆ ԼԵՁՈՒՄՑ

1862.

Հրատարակում է ԵՊԻՖԱՆՆԻ ՄԷԼԻՄԵՐԵԱՆԳԸ 1862 թ.

28074 - 57 14.23

192.0 80604

ՀՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

С. - Петербургъ, 10 Января 1862 года.

Цензоръ В. Бекетовъ.



10600-57

Ա

Ա՛ր Եզգի քաղաքական վիճակը ընդհանուր անսուժեամբ նկարագրելով, կ'հրաւիրեմ Եզգի բանասերները մեզ հառուչեանին դարձնելու միջին դարու ազգիս ընդհանրութեան խառն և մութին վիճակաց բուն իսկ միջակիտին վրա. ուր որ կըռքին երկու թաթը հաւասար քանակութեամբ կ'գտնենք, ոչ յառաջ ոչ յիս նայելու խորհուրդ կտամ նրանց. վասն զի մէկին կամ միւսին ուրին որ աւելի հակիմք, անշուշտ կըռքին մէտը ուղղաձիգ չենք զրանիլ. այլ վիճակաց հաւասարութիւնը կորցնելով, մէկ կողմը շատ, միւս կողմը սակաւ կ'գտնենք:

Միջակէտ վիճակաց կը կոչեմք Եզգերուս այն ժամանակը, երբ որ Երչակունեաց թագաւորութեան վերջանալուն՝ մէկ կողմէն երկու անգամ միապետական թագաւորութիւն միութեամբ Ազգին կանգնել, ու նոյնը անմիաբանութեամբ ձգել էին, մէկ կողմէն էլ՝ նոյն ազգային սիրոյ համակրութեամբ երկու միապետական թագաւորութիւն էլ կանգնելու և ձգելու միջոց ունէին: Ահա մեր Եզգի քաղաքական վիճակաց հաւասարաչափութիւնը. ահա կըռքին երկու նժարքը, իւրաքանչիւրին մէջ երկուքական պետութեանց կառավարութիւնները Եզգիս քաղաքական վիճակը հաւասարաբաժին կ'ամփոփեն. որով կըռքին մէտը ուղղաձիգ կ'ը գտնեմք, որովհետեւ երկու բաժնին մէջն էլ՝ նախ ազգային ոյժ և զօրութիւն կ'պարունակին, երկրորդ՝ թուլութիւն և անմիաբանութիւն տեղի կը գտնեն: Այս երկու և իրարից տարբեր ժամանակները կարծես մի և նոյն լինին. վասն զի իրարու այնքան նմանութիւն ունին, մինչև զրեթէ՛ մէկի մէջ եղած ազգային եռանդը, և եռանդով միացած ոյժը և կարողութիւնը՝ միւսին մէջ էլ մի և նոյն լինի, կամ թէ՛ առաջնոյն վերջին թշուառ ու ազգակործան վի-

ճակը՝ վերջնոյն մէջն էլ վերադարձած լինի: Չէ սոքա երկու և իւրարից ժամանակաւ և տեղով էլ շատ հեռու են:

Թէ որ այսպիսի մէտ ժամանակի կայ Ազգիս վիճակին՝ այն ժամանակը միայն է, երբ որ Արշակունեաց թագաւորութիւնը մէր պիտի մտնէր, ու Բագրատունեացը ծագէր. այս միջոցը միայն էր ազգիս, որ երկու ահեղ թագաւորութիւն ճամբայ դրած՝ երկու քրիստոսազօր թագաւորութեան էլ ընդ առաջ կ'ենէր. — Բայց չայաստան այս երջանիկ վիճակն էլ թշուառութեան պիտի փոխէ:

Այս է ահա վսեմ չայաստանի հակառակ բազդին հորիզոնը. որ մէկ կողմէն ազգին գոյութիւնը վերածնանող արեզակը յաւիտենականութեան Ավիլիանոսը իջեցնելով, մէկալ կողմէն պայծառ արև հայրենեաց սիրտը պիտի ծագէ. որով և այն թուլացած ու ժերը զօրութիւն տունելով, նորէն ոտք պիտի հինն, և սառած սրտերը իրարու վրա տաքացնելով, ազգի սիրոյ նուանդովը մէկ մէկու պիտի կապեն:

Ահա ո՞վ բանասէր, ահա մեր կենալուն տեղը. ազգերնուս հաւատարաչտի վիճակը դիտելու՝ մեր միակ դիտարանը. այս տեղից հայրենեաց երկրագունդը չափուած է. այս տեղից չայաստանի քաղաքական և հոգևորական վիճակը կարող ենք անսխալ չափել. և այս տեղից կարող ենք նշմարելու Ազգային մարմնոյ միութենէն քակուած անդամները ու հայրենեաց կիսագունդէն անցած կարաւանը:

Այս տեղը սահմանադուլն է չայաստանի. այս տեղից հայրենեաց սահմանները բանասիրի սրարիբ աչքին կերևան. կարող ենք դիտել այն ճամբաները, որոնք մեր Ազգի նախկին դաղթականները նոյն սահմանների վրայէն բացին ու անցան. որոնք շրջակայ ազգաց հողը շէնացնելով, իրանց խանձարուրին օրօրանը չայաստանի անհարազատ զաւակներին ձգեցին:

Չիմա այս սահմանազլէն դիտենք բուն իսկ չայաստանի վրա. և կ'զտենք զայն փոքրիկ աշխարհք արևելեան երկայնութեան 41⁰—55⁰ և հիւսիսային լայնութեան 41⁰—44⁰. աստիճանի տակ. հիւսիսային բարեխառն կլիմաներու մէջ, այնպիսի մէկ դիրքի վրա, որ փոքր Ասիային սիրտը կ'համարուի:

Այս տեղից կ'տեսնենք այս ժամանակի չայաստանը շրջապատ ազգերով պատած՝ իր չորս կողմը թումբի պէս բարձրացած. թէև սրա մէջի ազգը այնպէս եղաւ կրթմն, որ այս թումբերը ճեղ-

քեց ու կուրարէն դուրս ելաւ . կ'տեսնենք դարձեալ, որ այս միջումը իր ալիքներէն չ'պատճառուեց, այլ միշտ օտար ազգաց յորձանքները շայտատանի սահմանազրուխներէն՝ հեղեղների պէս թուամբերը ճեղքելով ներս վազեցին . և ինքն էլ այս միջումէն իր ալիքները չ'կարելով յինքն խորասկել, միշտ թուամբերը կ'քակէր ու դուրս կ'հինէր յակամայից :

Այս ժամանակէն ահա՛ կ'տեսնենք որ շայտատանի սահմանին արևելեան հարաւային թումբը միշտ քակուած էր Պարօլից յորձանքի յառաջը . ուստի նրա հեղեղները անդազար երկրին ներսերը վազելով, Արարատեան շայոց միջնաշխարհին կողմը Արասխէն այն դիհ խոռվումթեան լիճ էր կայացրել . որ ինչ ժամանակ Ազգիս խոռվումթեան ներքին մուրը դադարելու կ'լինէր, և պարզ ջուրը խողաղելու կ'ստատէին, նորէն այն լիճը իր զարշահոտութիւնովը մեր աղբիւրը տակնուվրայ կ'անէր, իրեն միւրըրը ամէնին դառնուած թեան բաժակ կ'մատուակէր . քանի որ շայտատան ջանք կանէր այս դարշահոտ լիճը քակել, ինքն էլ կրկնապատիկ կ'քակուէր . այս լիճը քակուեց, երբ որ շայտատանն էլ քակուեց :

Իբօք էլ այսպէս էր . իբաւ որ շայտատանը երբէք չ'կարաց այս աշխարհաւեր հեղեղին յառաջըր առնել . իր արևելեան սահմանազրիս միանգամ պատառուած թումբը նորէն քաշել, և ահա՛ այս հեղեղէն իր աւերումն էլ յառաջացաւ :

Շայտատանի ազգը փոքրիկ ալիք էր խոռված այս յորձանքներէն . նրանց յառաջը չ'կարողանալով բռնել, իր ոյժը արևմտեան ու հիւսիսային սահմանների վրա թափեց . և հեռոցհեռէ իր մէջը առած հեղեղներու բռնութենէն յետ մղուելով, թումբերը քանդեց, և ուրիշ սահմաններ մտնելու ճամբայ բացաւ :

Այս թէ և ուրիշ ազգաց հեղեղներ էլ դէպ 'ի շայտատան թումբն 'ի ներս վազեցին, բայց նոյն մեր ազգի առաջին թափը մէկ կողմէն որ մինչև Առփորի ափունքը ծծծել էր, միւս կողմէն էլ Արանաց դռնէն անցած մինչև Սարմատացուոց աշխարհը ու նաև Ալաքիս, Աւլահ ու Պուղտան դադար գտած էր :

Շատ յուշ ժամանակ եղաւ, որ հարաւային արևմտեան կողմէն մէկ նոր հեղեղ էլ շայտատան վազելով, ազգի մնացած նշխարքն էլ նա սրբեց, ողորկեց, ու Ասորեստանի երեսը ակուեց . և ահա՛ այս ժամանակն էր, որ մէկ յառաջ էլ (թափ) Ազգիպտոս էր թափել . այն ժամանակը հայկական ազգի մէկ միութիւն էլ այն տեղ կազմուած էր :

Եւ արդարեւ բոլոր ազգիս պատմաբանները այս ճշմարտութեանս կ'վկայեն, ինչպէս որ մենք էլ կ'դաւանանք վկայելու ընդհանուր տեսութեամբ իսկական նիւթին վրայէն անցնելով:

Արշակունեաց ու Քաղբաստունեաց թագաւորութեան երկուքին միջոցը մէկ այնպէս ժամանակ է ազգիս, որ մէկ ծայրով ազգի միութեան կապը կ'կտրէ, մէկ էլ ծայրովն էլ նորէն այս կարուածը կ'միացնէ. շաղկապ երկու բաժանմունքների միութեան. թէ որ այս բաժանմունքը չ'միանար, ազգը իւր գոյութիւնը պիտի կորցնէր:

Այժմ մինչև այս միջոց սահմանափակ էր շայաստան. շայկայ սերունդը մէկ հողի մէջ կ'բուսնէին, ու մէկ հողի վրա կ'աճէին, բայց երբ որ պարսկային հեղեղները հայրենեաց սիրտը վազեց, սերմերը արմատէն խլեց, ու երկրէ երկիր, լեռնէ լեռ ձգեց:

Արշակունեաց վերջին օրերը Պարսից ոյժը շայաստանի վրա շատնալով, իրեն զօրութիւնը հարաւէն ներս կոխեց, ու Մեհրուժաններու ատրուշանը Վփնայ մէջ վառ պահելով, դեռ ու Քրիստոս մէկ տեղ կուզէր պաշտել տալ. բայց շայոց Ազգութեան ոգին այնքան արթուն էր մէջերնին, որ տակաւին գրեթէ աչքով կ'զիտէին Արտաշէի խռոված թագն ու դաւազանը, որոնք դեռ ևս յաւիտենականութեան սևակթոյր վարագուրին տակը ծածկուիլ չէին ուզել:

Ինչ և իցէ, այս ոգին էր, որ Մամիկոնեանց քաջերը վառեց. Մեհրուժանն էլ իր ատրուշանին վրա շամփրեցին. և մոզերի կրակը իրանց հաւատոյ հօր տանը¹ մօտ մշտավառ ծխալու չուզելով, որպէս զի իրանց պայծառ հաւատքն էլ չ'ծխտտի. Արա համար Պարսից բիւրաւորներէն զէշ զէշ վրա, զէնք զէնքի վրա դիզեցին, իրանք էլ նրանց վրա յաւիտենական քունը քնացան, մէկը առ տանն, տասը առ հարիւր. իրանց յառաջնութիւնը սրանով էլ ցոյց տալով, որը որ սեպհականել էր ազգերնուս բազմայաղժին Արտաշէս:

Ահա մեր ազգի միապետութեան երկրորդ ճրագը նոր մարտուն՝ նոյն ազգի անխլահանութեան քաղաքական վիճակը ու նրանց բազկի ոյժը. որոնք թէև մէկ անգլուխ մարմին էին, բայց դեռ ազգային միութեան ոգին կենդանի էր. և այս էր որ բոլոր սրտերը մէկի կամեցը նուաճել կ'տար, իրանց ազատութիւնը դերի չ'տալու:

¹ Եկի զնցին Վփնայ յանուն սրբոյ Առաստուրչի:

Այս էլ շատ չքշեց Հայոց ազգին. Արշակունեաց գայիսոնը գնալով գնաց ու յաւիտենականութեան խաւարին մէջը ծածկուեցաւ. որդին հօր տեղը բռնելով, հօր անունը միայն վրան առաւ, գործքը վար ձգեց. անունով իր հայրը կ'ձանաչէր, գործքով նրա ուր լինելը չուզէր գիտենալ. հայրը պարսիկները կ'սարսեցնէր, որդին մէկ պարսիկէ կ'սարսափէր. միով բանիւ՝ հայրը իշխան ու զօրաւոր էր, որդին ստրուկ ու զինուոր դասալիք եղաւ. — Այսպէս էր Հայոց Վաղաքական վիճակը գրեթէ ընդհանուր Հայաստանի մէջ, երբ որ երկրորդ սերունդ յաջորդեց առջինին Արշակունեաց տանէն ետքը:

Արանց զաւակներն էլ մէնչև Վագրատունեաց օրը՝ հարազատ որդիք եղան իրանց ծնողաց. վասն զի՝ նրանց գործքերին էլ հաւատարիմ աւանդապահ եղան ու նոյնը յետագայից ժառանգութիւն ձգեցին: Վաղդատէ իրարու հետ սիրելի բանասէր, այս երկու սերունդը. երկուքն էլ մէկ տանից էին, մէկին վրա հօր առաքինութիւնները չէն երեւիլ, մէկալին վրա հօր չ'արած մոլութիւնները կ'տեսնուին. թէ ինչ կ'հաւատաս, այս տեղից մտանախ առաջին բարուց փոփոխութիւնն էլ Հայոց մէջ:

Մեծ շրջան էր այս Ագային բարուց փոփոխութեան. սրանից յետոյ կ'տեսնենք որ ամէն անհատից գործքերն էլ փոխուեցան. ինչու որ կամքերնին էլ փոխուած էին. և ամենեւին սիրտ սրտի չէր նմանիլ. կերպարանքներն էլ մէկ մէկու դէմ պաղ դէմք առած՝ խօսքով էլ իրարու հակառակ կ'պատասխանէին. ազգութեան ու գին այնպէս կերպարանափոխ եղած էր, որ ազգիս այս ժամանակի քաղաքական վիճակը առաջիններին չի նմանիլ:

Այս միւրըր պատեց Ալունեցու սիրտն էլ, որ բոլոր Հայաստան արիւնջուայ արուց. ուստի իր որդնալից դիակն էլ հայրենի հողը իր մէջը չ'առաւ՝ չար ընդ չարի հատուցանելու. թէ որ Աբէլի արիւնը իր եղբօրէն կ'բողբէ, բոլոր Հայաստան. իր զաւակաց անպարտ արիւնը սրանից կ'պահանջէ յաւիտենականին Աթոռի առաջև. ուստի նրա գէշն էլ չէր կարող իր մէջը ծածկել. — թէ որ այս հարկ լինէր, բնութեան դէմ բռնութիւն սրած կ'լինէին մեր նախնիք:

Աղէ՛ այս ժամանակիս մէջ յառաջ երթանք. մի քանի մասնաւորաց գործքերէն ազգիս ընդհանուր վիճակը հասկանալով, կ'տեսնենք որ բովանդակ մարգարանների ու դատականների օրով զը-

ութիւն ամէն մէկ անհատ ընդհանուր ազգի քոյութիւնը պահելու դիտումը յետ ձգելով, անձանց ու ընտանեաց միայն պահելու՝ հազար հնարքներ կ'գտնէին. նախարարները իրարու դէմ մշտնջենաւոր նախանձ անուշանկով, Ազգային ատելութեամբ ամրացած էին. մէկին առաքինութիւնը՝ միւսի աչքին ծանր կ'գար. թէ որ ուրիշ մէկն էլ մոլութեամբ ընկերին վրա երթար, շատերը այս մոլութեան շուքին տակը կ'վազէին առաքինութիւնը հեղձուցանելու. ուստի մէկի գործքն էլ միւսը կործանելու կը դատէր. իրարից անկեղծ սէրը սառցրած, պարսիկ մարզաբանների վրա սուտ սէր կ'ձգէին, միայն թէ մէկզմէկ վնասին. — մէկի առաքինութիւնը մէկալին անտանելի էր:

Արանք էլ որ երբեմն հայրենեաց թշնամու դէմ ծեծ կ'բռնային, իրարու կայից ու կենաց դէմ էլ պատերազմ բանալ սկսան. որոնք իրանց նախանձու զէնքը մէկ անգամ հայրը որդւոյն եղբայրը եղբօր վրա դարձուց. թշնամուն էլ այս պէտք էր, որ նախ տան հփօրը կապէ, և ապա տղանը աւար հարկանէ. աղբահանները մէկ մէկի դէմ կամաց և կրից ծեծ ունենալով, թշնամու յառաջքը առնելու ժամանակ չունեցան. ուստի նա էլ որ անգամ մի սահմանադիւնէն ներս մտել էր, չայոց այս Վաղարշական թըրուտա վիճակէն օգուտ քաղելով, իր զէնքը երկրին ներսերը թափեց. Սա էլ հայ իշխանաց խնդրին խնդարով, կերպ կերպ խորամանկ ճամբաներ բռնեց. խօսքով քսուները և բանասարկուները սիրել կ'ձեւանար, սրտով երկու դասն էլ կատէր, բանասարկուն էլ բանասարկունն էր. իր վաստակը միայն կ'նայէր, զոր կ'շահէր սրանց բանասարկութեան երեսէն:

Թէ որ Վաղարշապատի թաղին ժամանակը փոքր ինչ յուշանար, այն թշնամու զէնքը որ չայաստանի արեւելքէն ներս մըտած էր, արեւմուտքէն դուրս պիտի ելնէր. — Այն ժամանակը պարսկական յորձանքը մեծամեծ այլքներով պիտի սրբէր ոգոյէր չայաստանի հողն անգամ. ջրհեղեղէն աւելի անմարդաբնակ պիտի անէր մեր հայրենիքը թշնամու արշաւանաց այս հեղեղը:

Վայց հազիւ թէ չայաստանեաց ողին որ կարծես թէ չայկազանց ժամանակէն ծածկուած էր Արմաւրայ սօսիների տակ, ուր որ առաջին անգամ խռովեցաւ անմահ Աշակին տեղը արարածական էակ պաշտելուն համար, հազարաւոր դարերը վրայէն մէկ զիշկուտան պէս անցնելով, յանկարծ արթնացաւ, տեսաւ որ չայոց

աշխարհքի երկրագունդը իրեն դարաւոր շրջանը կատարել, դարձել, ու արեւու նոր ծագած շողշուղուն ճաճանչների հետ՝ Քաղբաստունեաց թագն ու դայիսներ լուսի մէջ տանապատիկ լուսով կ'վառի. իրեն անգամանդների շառաիգըը Հայկայ և Արշակունեաց սերնդոց սրտերի պատուհաններէն ներս թափանցելով, ամենի մտաց հոգւոյ ատելութեան մտախնուղը սև ամպերի նման հալածելով, ամէն սիրտ նորէն կ'տաքացնէ հայրենի միութեան վրա. և եօթանասուն և եօթն անգամ անցած գնացած տարիներով սիրոյ ջրհորին մէջ Ազգային միութեան ոգւոյ կայծը վիրտոսին արծարծելով, զամէնքը մի սիրտ մի հոգի կ'վառէ. — Այն ժամանակ անզուգական սիրով և անքակտելի միութեամբ զէնքի կ'վազեն. թշնամին որ մինչև երկրին մէջը արշաւեր էր իր աշխարհաւեր յորձանքներովը, մեծ քաջութեամբ վնասի կիսէն յետ դառնալով, նորա ահեղ ու անսանձ թափերի յառաջը թուր կ'քաշէ, և նրա մրրկալից պլեքները Արասխէն անդին կ'ամփոփեն, ազգային սիրոյ և խաղաղութեան հիմը դնելով:

Այսպէս ազգը իր արեւելեան սահմաններէն ճնշուելով, արեւմտեան սահմանադիւէն դուրս կելլեն, ու սակաւ սակաւ իբրև հարթ հաւասար դաշտի երեսը կը տարածուին իրանց իշխանութեան գաւազանին տակ. որովք բովանդակ Քաղբաստունեաց օրովը Հայաստանի հարաւային և արեւմտեան ոլորտը ազգով լցուած էր. մէկ անգամ կարծես թէ արեւելքէն դէպ 'ի այս կողմերը գաղթականութեան ելած էին. ինչու որ թշնամու արիւնտ սուրը սահմանադիւէն դէպ 'ի ներս կ'շողար. և քրիստոնեայ պարանոցի վրա ծուխը սորված էր. այսպէսով մէկ անգամ դարձողը, էլ յետեր չէր նայիլ Հայաստան երկիրը վառող ծծումբին ծուխը առնելու. ուստի հայրենեաց մէջը բնակող ոտքը այս ժամանակէն դաղթելու սորված էր, և օտար հոգը կոխելու կը քաղցրանար իրանց. շատերն էլ իրանց քաղաքական վիճակը ու մարդասէր վարմունքը անապատներու, լեռներու կեանքի փոխած էին. ոչ միայն վրանաբնակների բնակելութեան ընտելացած, այլ և օտար ազգաց հետ էլ առանց խորութեան կրօնի օտար բարբերի էլ իրանք իրանց հնազանդեցնելու սորվեցրիլ էին:

Հայաստանի այս յիշած սահմաններէն այն դին քրիստոնեայ ազգաց հորիզոնը լինելով, պարսկական երկրէն աւելի ստիպուած էին սրանց հակելու. առաւել բնարելով քրիստոնեայ ազգաց փառ-

քերին հնազանդել, քան միւս կողմէն ազգային կրօնքը կրօնապաշտութեան հնազանդեցնել. ուստի այսաստանի արեւմտեան սահմանէն ազգը հորդան տալու և օտար դրացիներու հետ երբ խառնուելուն յիշատակը չ'կայ. միայն այս կերևի այն ժամանակը, որ որքան յունական ազգին հետ սահմանազուխներուն վրա խառնուել էին, այնքան էլ հայկական բարուց մէջ խառնուող մտել էր. այս խառնուողն էր որ մեծ ներդրութիւն արուց ամէն հատուածների վրա, ինչպէս յառաջ երթալով կ'տեսնենք:

Միայն թէ այս միջոցին էր որ ազգի միութիւնը դարձեալ երկփեղկելով, վեց կտոր բաժանուած էր. այս քրիստոնեայ ազգին ամէն մէկ մասը մէկ համազգային դրօշակի տակ առանձին գունդեր կազմուել էին, ու հայրենեաց սահմանէն նշնելու կամաւ ոտք կը դնէին. վասն զի՝ էլ մէկ միութեան մէջ կենալը անհնարին էր վեց գլխին մէկ տեղ: Անգամ մի այս միութիւնը քակելու համար այս գլուխները իրար զարնուելու փորձը մտքերնին մէջը յղացել էին. ուստի կրբմն որ ուրացողների կրեանէն, մեր հայրենիքը արիւնով ողողուեց, հիմա սրանք այն սոսկալի յիշատակը նորողեցին. ինչու որ ինչպէս ասացինք, այս անլսելի արարքը հայրենի ժառանգութիւն մնացած էր իրանց Խոսրովէն ու Արշակէն. և այնպէս ազգական ազգականի, հայրը որդւոյ դէմ՝ զէնք վերցրին, և իրարու արիւն թափեցին. — Արդեօք ի՞նչ թշուառ վիճակի մէջ կ'լինէր սրանց ժողովուրդն էլ. այս չէ՞ որ բարեկամութեան կապը քակեց սրանց ընտանեաց մէջէն, ու ազգակցութեան արիւնը պաղեցրուց գերդաստանների սրտին վրա. ազգային փոխադարձ սէրը՝ փոխադարձ ատելութեան փոխեցին, ու ընտանեկան կապը թշնամութեան սրովը խղցին:

Սոցա կեանքը այս վտանգի մէջ լինելով, իրանց մարմնոյ հանգըստութեան հետ՝ հողւոյ ու սրտի խաղաղութիւնն էլ կորցրել էին. անյատակ ովկիանոսի մէջ ընկած նաւակի նման ալիքների երեսը խաղաղ նաւահանդիստ չէին դանել. ցերեկը զննուորուած իրանց ազգայնոց դէմ՝ իբրև թշնամուց երկիւղ ու սարսափ կը կրէին. գիշերն էլ իրանց մուտքը զէնքով կ'ամրացնէին. ահա սրանք այս նեղ վիճակին մէջ՝ իրանց ստացուածոց վրա էլ ապահովութիւն չունէին. ազգի խաղաղութիւնը գտնելու համար՝ ազգը կը կորցնէին, և երբէք չէին հասկանալ. թագաւորութիւնը կանգնելու համար՝ նոյն իսկ թագաւորութիւնը ձեռքէ կ'հանէին.

Թշնամին էլ տկար կողմը կ'բռնէր միշտ, որպէս զի ազգին զօրաւոր կողմը նուաճելով, ազգը սպառնի. այս դրօշակակիր կողմանքը մէկ մէկի դրօշակ պատերազմի ասպարիզի մէջ ձգելու կ'դատէին. իսկ Թշնամին մէկին կողմ, մէկէլին ակոյեան ելներով, երկուքն էլ 'ի միասին Արեգական դրօշակին առջևը խոնարհեցնելու կ'դատէր Հայկական անխոնարհիւ Արծիւները:

Ճաղիւ ուրեմն հասկացաւ Թշնամու դարանը, բայց էլ ժամանակն անցած էր. պատերազմի յաղթութիւնը Թշնամին վաստակեց. այս պատերազմող կողմանց միութիւններն էլ իրարից քակուած, հայրենի սահմաններէն անցած էին, երբ որ փախտեան նշանը տրուեցաւ. արդէն Շ իրակայ գահին խորհրդականները պատառող առիւծի երեսէն սասանած, անմիաբանութեան հարուածներն էլ ուտելով, գաղթական կարաւաններով խաղաղասէր սահմանները ամէն կողմէն բռնել էին. իսկ իրանց մարգաշատ Անին աւար ընկած էր Ճայաստանի դահճին ձեռքը. — բայց նա էլ այս կողոպուտը իր մէջը չկարաց բաժնել. քանի մի անգամ Պարսից հետ մեծամեծ կոտորուածքով տուին ու առան. վերջապէս երկրորդը յաղթական հանդիսացաւ. իրաւունքն էլ նրանն էր. իր աշխարհաւերութեանը արժանի կողոպուտ:

Այս վերջի սրածութիւններն եղան, որ սասանեցուցին Ճայաստանի վերջին անկարող ընտանիքը. մինչև որ սրանք էլ իրանց չուն կազմեցին 'ի Միջագետս Ասորոց. ուր որ ժամանակից յետոյ Տորոսի լեռների մէջ ազգին նոր միութիւն տալ ուզեցին. բայց մէկ հօր հարազատ զաւակների մէջ մայրական խորթութիւն մըտնելով, ազգային արիւնը որ խորթութեան հետ չ'կարաց միութիւն պահել, սրանց քակտումն էլ չարաչար եղաւ. վասն զի՝ սրանց դէմն էլ Թշնամիք էլան, որոնք թէ որ գութ պիտի ձգէին Ճայկայ սերունդների վրա, բայց սրանց մայրների խորթութենէն կ'տորչէին. և այսպէս քանի որ մայրական սէրը այս սերունդը դէպ իրան կը քաշէր, սրանք էլ այնքան այս միութիւնը կտրելու կ'ջանային: Վերջապէս Ճայկայ ահեղ զերդաստանէն մէկ ընտանիք Միջերկրական ծովու Ազինեան ափանց վրա Ճայաստանէն հազար մղոններով հեռու՝ նորէն շառաւիղելով, հայրենեաց օգուտ չանկէն ետքը՝ մնացորդներին էլ Թշնամի պիտի յարուցանէր. այս թշուառ վիճակին մէջ՝ նրա անկումն էլ աւելի կ'ուզվէր, քան թէ օտար ցեղի հակելով, ազգը ազգութենէ հանէր ու նախանձը նորէն բոր-

բորէր. — Եւ ահա այս նախանձն էլ շիջոյց Լուսինեան վերջին
Թագազիր ժառանգը՝ Աէն գետին ավանց վրա, նորէն յաւիտե-
նականին ձեռքը տալով շայկազանց ազգի տարագիր եղած Թագն
ու գաւազանը. որով և ազգային ոգւոյն դիմացը տխուր սարա-
ւոյթը ձգուելով, շայաստանն էլ նրա հետ ամպոց վրոզովմանց և
ասասնութեան ալիքների մէջը ծածկեցին:

Այն վսեմ ազգին իշխանութեան ժառանգները, որ փոքրը
մեծին հնազանդիլ չէին ուղի սորվիլ, տեսանք որ անիշխանու-
թիւնը գլուխ բարձրացուցածին պէս՝ իրանց կամացը վրա նոր
բռնակալների կամաւ հնազանդեցին. արդարև ուժաթափ ըմբիշն
նման իրանց ախոյեանին ոտքը խոնարհեցան. անգամ մի բռնու-
թեան լուծին տակ իրանց պարանոցը սորվեցուցին, էլ մոռացան
իրանց ինքնիշխանութիւնը, այնուհետև ծառայք եղան տերանց,
ազգին բնաւորութիւնը կորցնելով, խորթ բարք ստացան, սրանով
էլ այլ և այլ կլիմաների տակ եղած մի և նոյն շայոց որդիքը միւս-
ներէն զանազան եղան. իսկ բուն հայրենեաց մէջը եկամուտ ազ-
գերի հետ Թափառողներն էլ՝ ազգային յատկութիւնը չպահեցին,
նրանք էլ զօրաւոր կողմը հակելով նրանց օտար բարքի հետ լիզուի
խորթութիւն էլ առան: Այս ներգործութիւնը շայաստանի ա-
րևելեան հարաւային կողմին վրա աւելի զօրութիւն և ոյժ ունե-
ցաւ, ուստի որ նախ առաջին ազգաց մուտքը բացուեցան: Այս-
պէս ազգիս ուրիշ հատուածները, ուր որ շայաստանէն զաղթե-
ցին, այս նորաձեւութիւնը յարգեցին կամայ տկամայ. ինչու որ
կրկի լիզուն աւելի իշխող էր բնակչաց վրա, քան թէ բնակիչք
իրանց սեպհական լիզուին վրա:

Շինն եկ սիրելի բանասէր, այս ընդհանուր տեսութենէն
ետքը՝ միանգամ էլ մեր կեցած հորիզոնէն՝ այն ժամանակի շայ-
աստանը դիտենք. այն ժամանակի մեր միակ հայրենիքը, երբ որ
ազգը հատուած հատուած իր խանձարուրէն դուրս կկլլէին, աչ-
քները հայրենեաց վրա տնկած, ոտքները օտար հողը կօխելու յա-
ռաջ չէր երթալ. անձամբ կբաժանուէին, բայց հողին նրա հետ
կապուած էր. հայրենիքը իրան կ'հեռացնէ, բայց ճշմարիտ հայի
սիրտը նրանից բաժանուիլ չէր ուզիլ. շատ յետոյ շայաստանը
ճանաչեցին, բայց ի՞նչ հետք կայ դարձի. էլ շայաստանը իրանցը
չէր. բոցեղէն սուրը Ազամը զրախտէն կ'հանէ. — Աւր է այն դեր-
բնական բազուկը որ Ազամայ հետ ազգն էլ վերստին շայաստանի

դրախտն առաջնորդէ. Այս առաջինին ժամանակն էր. ետքինը դեռ աստուգային մէջը կ'ծածկուի. ուր ողին շայաստանեայց ծունկի վրա եկած՝ բաղկատարած կ'աղօթէ. իր քովը թաւալած ազգային թշուառութեան անցից մատնանը Վարձրեանն խոնարհել է առնելու:

Շայաստանի Վաղարշական իշխանութիւնը այս ժամանակ սեղմուած էր չորս կողմից, որ իր կեդրոնի վրա հագլու կ'դառնար. բռնական պետութիւնները, որ շայաստանը սահմանադրութենէն կ'ճնշէին, ազգական տարբերութեանց հետ կրօնքի ատելութիւնն էլ կ'զորացնէին. և քանի որ երկրին ներսերը հորդան տուին նրանց բռնութիւնը, հայրենեաց կրօնքին լոյսը աւելի խորից սկաւառակին մէջ ժողովելով, ճաճանջները սուր աէզի նման յախշտակող պետութեանց աչքերը կ'խտողէր. այս եղաւ ազգին գոյութեան քակուելուն աւելի զօրեղ պատճառը. մինչև որ թշնամեցն արշաւանքը չորս կողմէն իրարու հասան, այն փոքրիկ իշխանութեան ոյժն էլ գրին իրանց տիեզերասաստ գաւազանին տակ. և կրօնքի պայծառ լոյսը թէ որ մթնացնելու էլ չի կարացին, նրանց սուր ճաճանչը կոտրեցին. բայց էլ աչքները սորվեցաւ, երբ որ իրանց քաղաքականութիւնը բռնացաւ ընդհանուր աշխարհքին վրա. և շայաստանը իրանց արշաւանքին աւար դանելով, եղբօր պէս մշջերնին բաժնեցին, ու իրանց այլատարազ ձեւերովը շայաստանի սահմանը չափեցին:

Շայաստանի արտաքին երեւոյթն էր այս. իսկ ազգին մտաւորական կարողութեանը վրա՝ երկու տիրող զօրութիւն կ'տեսնենք. որոց մէկին ուժովը թագաւորական գահը իր գոյութիւնը կ'պահէր, իսկ միւսի հակառակ ներգործութեամբը իրարից քակուելով, նոյն Ազգային իշխանութիւնը կ'ձգէին:

Առաջին զօրութիւնը, որ միութեան հողին էր. որով բոլոր բանական գլուխները մի մարմին մի հողի կազմուելով, միապետական իշխանութեան գաւազանին էլ միաձայն հնազանդեցին ու շրջակայ ազգաց ահարկու եղան:

Արկորդ ներգործող զօրութիւնը գիտութեան պակասութիւնն էր. գիտութիւն չ'լինելով, ազիտութիւնը միապետական հրամանին տակ յառաջագաս գլուխները կ'ամբաստանէր. և միաբանութեան ողին հակառակասիրութեամբ հալածանքի տակ կրդնէր, ազգի վիճակն էլ այս կ'պահանջէր. այս պէտք էր, որ չ'կար. առաջինը հարկաւոր չէր, որ կ'օրէր:

Առաջինը հարկաւոր չէր, այն է տգիտութիւնը. վասն զի՝ գիտութիւն որ լինէր, գիտութեամբ ազգը կ'բռնուէր. և միապէս տական իշխանութեամբն էլ՝ ազգի միութիւնը կ'սահուէր. այս երկուքովը մէկ տեղ՝ միապետութիւնը կ'մշանջնեաւորէր. և Հայաստանի թագը գերի չէր գնալ. ներկայ յաջողութեան մէջ՝ յանչափս չէին շոտայլել, որ առժամանակայ յաջողութեանը՝ մշտնջենաւոր ձախողութիւն փոխանակէին. այլ վասն զի՝ զօրութիւն ունէին, գիտութեան հոգ չ'տարան. կարծիք արին, որ սրբով միութիւն կարող են պահել, հաւատալով առածին, «Սահմանք քաջաց՝ զէնք իւրեանց». բայց աշխարհքի անիւր այնպէս յանկարծ մի դարձաւ, որ սահմանները հիմն գիտութեամբ կ'չափուին. զէնքերը ու քաջութիւնը գիտութեան դրօշակի յառաջը իրաւամբ կ'խոնարհին. Հայոց քաջութեան զէնքերը մտաւոր կարողութեան դէմ խոնարհելուն օրինակը՝ հազար տարիէն ետքը այսօր Հինարեան Ապողոսի կրկնախն վրա կ'տեսնենք. ուր որ բիւրաւոր քաջերի դէմ գիտութիւնը միայն կ'ձակատամարտի, և անթիւ զէնքեր նրա դրօշակին կ'խոնարհին:

Այս էր մեր ասածն էլ, որ մեր ազգի քաղաքական վիճակը երկու հաւասարաչափ բաժին կ'ամբոխուէր. կառավարութեան ներքին թաթը. մէկին մէջը ոյժ և զօրութիւն, միւսին մէջ տկարութիւն և տառապանք, կամ թէ լաւ ևս, մէկը պտուղ միութեան, և միւրը պտուղ տգիտութեան:

Երկուքին համն էլ առինք ազգիս քաղաքական վիճակը նկարագրելով, մինչև մեր ասած եօթնևտասներորդ դարը, թէ և փոքր մի հեռի ձգեցինք այդ ժամանակից. բանասէրը դարձեալ զանազան չի գանիլ մնացած միջոցն ևս. ուստի սկսենք մեր ասած ժամանակի ազգիս քաղաքական վիճակը գրել. առաջինի քաղցրութիւնը որ չի մնացել, երկրորդի դառնութիւնը կամաւ ճաշակենք:

Այս տեղս հետաքրքիր ընթերցողք ազգիս Վաղաքական վիճակը զննելէն յետքը, գուցէ իրանց ուշը դարձնեն եկեղեցական վիճակն էլ դիտելու. որ կրօնքի հետ կապուած լինելով, միշտ դատաբնութեան տակ է. բայց այս էլ առանձին յօդուածով գրելու մտադիր ենք:



Հայաստանի բնակչաց բազմապատկումը 1700—1800 թվականներին
(1700 — 1800):

Հայաստանի բնակչաց վրա խօսելով, հարկ կը լինի ընդհանուր տեսութիւն մի ևս նոյն բնակչաց ամէն մէկ մասին վրա անել, որոնք հայրենեաց այլ և այլ զաւառաց մէջն են, և իրարից ևս տարբեր վիճակ ունին. — մենք այս մասերի առանձին վիճակները պիտի նկարագրենք յանուանել յիշելով իւրաքանչիւրոց տեղերն ևս:

Որովհետև Հայաստանի արևելեան մասին այն փոքրիկ տրամագծին վրա նոյն զաւառներն ևս այն ժամանակ առանձին առանձին կառավարութեանց տակ էին, ուստի նոցա քաղաքական վիճակն էլ հարկաւ առանձին և տարբեր կ'ըլնէր:

Արարատեան դաշտին շրջականները, որ արևելեան Հայաստանի կեդրոնն է, այս դարուս մէջ բռնած էին երկը զատ զատ իշխանութիւն, երկքն ևս մէկմէկու դէմ բռնաւորք. այն դաշտերին երեսը միշտ մէկ կողմէն Արաց, միւս կողմէն էլ Պարսից ու Տաճկաց սուրը կ'սպառնար ու զէնքերը կը խշռայային, ուր որ ազգիս բնակիչներն էլ եկամուտ ազգերի հետ խառն տարածուած էին. անշուշտ այս պատերազմող կողմանց որը որ պատերազմի ասպարիզէն յետ կ'մղուէր, նրա ձեռքի բնակիչքն էլ հակառակ կողմի յափըշտակութեան և գերութեանցն ենթակայ լինելով, իրանց վիճակն էլ միշտ տառապանաց տեսարան կ'կացուցանէր:

Մանենք ազգիս այս ժամանակի անցից տեսարանների մէջ. ասածիս ճշմարտութիւնը կ'զաննէք Նատրշահի խղճէ դուրս գործքերի մէջ. դուցէ այն տեղ ազգիս տառապանաց վիճակը աւելի ծիղղ նկարագրուած կ'տեսնենք մինչև յոյժ. բայց նրա գործքն էլ մինչև ութ և տասներորդ դարու կէսը ընդարձակ չի պատմուիր, ուր որ ազգիս պատմութիւնը Չամչեանը կ'նքած է. մենք յիշեալ

Թուականէն վերջը ազգիս քաղաքական վիճակը այս մասին մէջ աւելի ընդարձակ գրելու յանձն առած եմք, որոնք որ պատմութեանց էջերը տակաւին չ'գրուելով, տակաւին ևս հազուադիւտ և անճանօթ են հասարակութեան:

Շատ տարբեր է Հայաստանի արարատեան մասին մէջ Հայոց քաղաքական վիճակը այն վիճակէն, զոր նրա («Նասարշահի») Թագաւորութենէն յառաջ ունէին մերթ Օսմանցւոց և մերթ Պարսիկների ձեռք:

Ի՞նչ տառապանաց մէջ էր Հայոց քաղաքականութիւնը սրա Թագաւորութեան ժամանակը. Հայաստանի դաւառաց Այսնք կոչեցեալ եօթն Ա կրակացուքն՝ որք թահմազի խորհրդականքը և գործակալները կ'համարուէին բնակչաց վրա, նոյն իսկ աշխարհքի կառավարութեան մէջ որքան որ զգուշացան, դարձեալ քաղաքական ծանր լծի տակ զրկուեցան Թագաւորի հրամանաւ որք աչքից, որք կիանքից, որն էլ դոյբից, ամէն կողմ պրատող լրտեսների ձեռքով յաճախ տուգանքի տակ ճ'նշուելով:

Այն ի՞նչ թշուառ ժամանակ էր բնակչացը երբոր Մահմատ Պուլի խան խորամանկ նախարարի խորխորատն բնկան ժողովրդոց զլխուտորները. այն ժամանակ սպրուստի եղանակ մտածելու միջոց չ'կար թշուառ բնակիչներին, այլ միայն կեանք ազատելու և հողի սպրեցնելու քաղաքական բռնութեանց երեսէն. սոցա վիճակը արիւնհեղութիւն և զերութիւն էր:

Արանից յետոյ աւելի ծանր եղաւ տառապանաց վիճակը Նախիջևանաց կողմի Հայերի վրա, երբոր Հէյտար խան անուն նախարարը իշխանութենէ ձգել տուին. վասն զի երկրի նոր վերակացուն իրին իշխանութեան անուրը այնքան սխմեց նրանց վրա հարկի ժամանակ, մինչև որ երկիր ու բնակութիւնին ձգելով, շատերը փոխան, շատերը տուգանքի բռնուեցին, շատերն էլ ծեծի տակ մեռան. իսկ որք մնացածներն էլ ոտքից, ձեռքից զրկուեցան. որք խելքէ ցնորեց, որն էլ խեղանդամ եղաւ. ինչու որ ծեծից ու բանդից ազատութիւն չի կարացին դանել. — Այս համառօխու իշխանութիւնը կ'ախրէր ժողովրդոց կենաց ու կայից վրա ոչ միայն Նախիջևան, այլ և նրա դաւառները՝ Ղողթան, Ազուլիս, Ջահուկ, Շահիբքու և Սիսական աշխարհքը բոլոր:

Այս կողմի հուրը չը շեջած, միւս կողմէն հրգեհ բարձրացաւ, և աշխարհքի խաղաղութիւնը աւելի սովի ու սրի տակ գրին.

այս ժամանակից փոքր մի յետքը Ազատ խան անուն մէկը այս կողմերի իշխանութիւնը ձեռք առնելով, ջանք կանէր իր անունին հետ մի ազատ գործ ևս անել. ուստի աւելի աշխարհքին ներսերը վազել ուզեց. Արեւանու գաւառները որ սակաւ ապահով վիճակ կ'վարէին Ա յայ ձեռքի տակ, այն ևս կարճել ուզեց. բայց Ա յայց Հերակլ արքայն չարաչար զինքը հարուածելով, թշնամու արեամբը նորէն գնեց բնակչաց քաղաքական ազատ վիճակը:

Այս տեղից կ'դառնամք Հայաստանի ամէն մէկ մասին վրա. վասն զի Հայոց պատմութիւնը ևս այս տեղ կը կնքէ ազգին քաղաքական անցից վիպագիրը:

Հայոց Ազգին բնդհանրապէս յայտնի չէ Տփլիսոյ աւերումը, ու նրա հարուստ բնակչաց գերեվարութիւնը Մահմատ խանի ձեռքով. յայտնի չէ նոյնպէս նրա արշաւանքովը բոլոր Ա յաստանի մէջ եղած մեր ազգի քաղաքական տառապանքը և գերութիւնը, որոնք Ազգային պատմութեան շարունակութիւնը կը կազմեն նոր մատաններով¹:

Արբ որ քանի մի հարուած Պարսից ասպատակող բանակը կրեց Հերակլէն, էլ նրանից յետքը թշուառութեանց և աղետից տեսարանը Ա յաստան փոխադրուեց. Պարսից խաները այս ժամանակիս որ մէկմէկից գլուխ քաշած էին, և ամէնքը իր իշխանութիւնը պարզել կուզէր, ժողովրդոց քաղաքական վիճակը իր գոյութիւնը կորցրած էր. վասն զի՝ սրանք որ իշխանութիւն շատացնել կուզէին, մէկմէկի երկիր ժողովրդոց արեամբը պիտի գնէին:

Հերակլ արքայն երբ որ իր սահմանից դուրս վազեց Արեւանայ վրա, ուր որ սաշարեց երկրին Հեւսէին այլ խանը, չորս ամսէն յետքը ամբողջ չկարողանալով առնել, Արարատեան գաշտի և մերձակայ գաւառների բնակիչքը բոլոր սրբեց Տփլիս տարաւ:

Ուստի մէկ կողմանէ Արեւանայ երկրի ամայութիւնը, միս կողմանէ էլ Ա յաստանի Մայրաքաղաքի հարստութիւնը սահմանակից բռնաւորների սիրաբ շարժեցին իրանց վրա. այս եղաւ պատճառ որ մեծ բազմութիւն գլուխը ժողովեց Մահմատ խան ասացնակ ներքինի մէկը խորին Պարսկաստանի մէջ. և բոլոր Ա յաստան տակն ու վրա անելու մտքով, վաղից Արեւնաց և Ա արարազու աշխարհքէն ներս. զարկեց ետեւէ ետև՝ Ատիսիճեանայ, Շուշուայ և

75-00901

¹ Ի շարունակութեան Չամչեան պատմ. Հայոց:



Արցախու խանութիւնները: Այս երկիրները որ Հերակլէ հետ դաշնադրութիւն ունէին, քակեց դաշինքները. միայն Շուշին որ միշտ անառիկ էր, և մի ժամանակ քաջութեամբ պաշտպանեց զայն Խրրայիմ խանը, բայց դարձեալ վերջը Մահմատ խանի հետ միացաւ. — Այս ժամանակի Արեւանայ խանն էլ որ նոյնպէս բարեկամ էր Հերակլէ, ձգեց բարեկամութիւնը ու դաշնադիր եղաներքինւոյ հետ և նրան օգնութիւն արուց զօրքով:

Այս սրածութեանց ժամանակ Հայաստանի բնակչաց մասները՝ որ իրենց բուն երկրի մէջ իշխանութեանց երեսէն քաշելիքները չի մնաց, կէսը պաշարման վիճակի մէջ դռնուելով ակամայ, սովն ու գերութիւնն էլ վրա կ'հասնի. կէսը ընտանիքը, զաւակները, տուն ու տեղ ձգած՝ սուրի և կոտորուածքի դէմ՝ իրանց կենաց և ստացուածոց ազատութիւնը ձեռք բերելու կ'ջանան. կէսն էլ երկիրդէն սարսափած բռնաւոր իշխողների լծի տակ կրմանն, ստացուածքը տալէն յետքը, կեանքերնին մահուանէ ազատելու:

Հայոց ազգի այս ժամանակի այն մասնաւոր բնակիչքը որոնք որ սրածութիւն կրեցին, յիշեալ արշաւանքների երեսէն՝ Այաստանի միջինը եղան առաւելապէս Տփլիսի Հայերը. Հերակլ թագաւորը երբոր անոյս մնաց այլոց օգնութենէն, իր ժողովուրդը զինուորեց թշնամու դէմ. այսպէս երեք հազար մարդով նրա յառաջը գնալով, կարծես թէ թշնամին կ'հրաւիրէր իր թագաւորական դահլը նստելու:

Արդէն Պարսից բունն հեղեղները Այաստանի սահմանագլուխը ծածկելով, ներս թափել էին. Հերակլ իր սակաւաթիւ զօրքով չկարաց դէմ դնել նրա բազմապտոյտ ալեքներին, այլ քանի մի օրից փախստական յետ դարձաւ. և թշնամին բռնեց Մայրաքաղաքի մուտքը. դեռ մահը այսպէս անակնունկի ազգային հարուածների մէջ չէր վճուել Այսաց ծերունի թագաւորի աչքին երևնալ. ուստի թշնամու դիմացը կապոյտ երկրագնդին երեսը իբրև սարաւոյթ սև մնուախուղը պատեց, մինչև որ թագաւորը իր ազատութիւնը գնեց. քաղաքի դուռը հասած, թշնամին որ կրհատապնդէր, ամբողջ թերանութները օգնեցին փախստականին:

Համբաւեալ Տփլիսը զարհուրելի արիւնհեղութեան տեսարան կ'գառնայ Մահմատ խանի զօրաց յառաջը. վասն զի երբոր տունն առ տուն, փողոց առ փողոց մտան ու աւարը ժողվեցին,

սրանցով իրանց քաղցը չի լցուեց. սկսան այնուհետև թշուառ ժողովուրդոց գլուխներին էլ առատ աւար անիլ. մարդու գլուխը մի թուաման դին ունէր խանի առատասրտութեան յառաջը. այն ժամանակը նորէն բացուեց տուրևառութեան կրկէսը. տղամարդ կրնիկմարդ կը դիտատուէր. իսկ տղայք ու աղջիկ գերի կերթային. մեծ վաճառք արին այն օր վաճառաշահ մայրաքաղաքին մէջը որ երբէք յուսած ու տեսնուած չէր:

Ի՞նչ աղաղակ, ի՞նչ ճշում, ի՞նչ արիւնհեղութիւններ Աուր գետը չ'բռնորեցին, որոնց հեղուները դուրեք դեռ կ'բողբեն Աստուծոյ առաջը, որ մէկի անգամ անպարտ արեանը համար կ'խոնարհի հատուցումն անել. — Այս բաւական չէր գերեվարեալ քաղաքին. հրը որ այս ամէն գործողութիւններն էլ կատարեց ներքինին, քաղաքն էլ կամուրջն հետ կրակը տուաւ:

Արա վախճանն այն եղաւ, որ յաջորդ տարին Ռուսները Վրիստոնեայ ազգաց սահմանը գննու գորութեամբ քաշեցին Պարսից երկրի կէս իշխանութեան երեսէն, և Ասպից ծովի հարաւային ծայրի այն կողմը փակեցին սարսկային ոյժը:

Արանից յետոյ կ'նմանի՞ արդեօք այս աշխարհքի ժողովուրդոց քաղաքական վիճակը յառաջուանի հետ, որ սրոյ և արեան մէջ կեանք կ'անցնէին: Զիմա տեսնեմք թէ հայկական բարբը այլ և այլ դաւառների մէջ քանի՞ քանի օտար սովորութեանց հետ խառնուեց, և արդեօք կարո՞ղ էր իր գոյութիւնը պահել այս այլ և այլ խառնուրդների մէջ. կարո՞ղ էր կասեմ իր գոյութիւնը պահել, երբ նրանց մէջ ամենից տկարը ինքն է, և ամենի ստորագրեալը:

Քանի մի տարիներ պէտք էին, որ Արարատեան գաւառին ու Նախիջևանայ երկրի բնակիչներն էլ իրանց հին քաղաքական վիճակի դարափարը փոխէին, բայց այս էլ մեծագոյն շրջանի կարօտ էր, կամ թէ Զայաստանի նորոգութեան յոբելինին. որպէս զի կարողանային իրանց խորագացած բարբը իրանցից բաժանուած մասին նմանեցնել. — Բայց թողունք սրանք տակաւին, անցնեմք միւս մասին մէջ:

Արաստանի հիւսիսային և հարաւային եզրերը որ մէկ մէկ թագաւոր բռնած էին, Ասիւթիւնը և Բանքիթու. սրանք էլ Զայոց դաղթականների բաւական բնակիչներ ունէին, ինչպէս որ մինչև հիմա էլ:

Այս երկու պետութեանց մէջ էլ չայոց քաղաքական առաջի վիճակը այժմեան եղածին չի նմանիլ. հարկաւ յետքինը գեր ՚ի վերոյ է առաջվանից. միայն այս տարբերութիւնը կայ. քաղաքացւոց վիճակը աւելի ազատ է, քան զգիւղացւոցը, որոնք վատտակի ազատութեան հետ՝ անձին ազատութիւն էլ ունին, բայց գիւղացւոցը այսպէս չէ:

Ստրկութիւնը կ'տիրէ Վրաստանի գիւղացւոց վրա, կերելի որ այս գիւղերը հին ժամանակ կայուածական ժառագութիւններ էին երկրի Աղուականաց, որոց բնակիչներն էլ հոգի հետ ժառանգութիւն մնացել է իրանց: Սոցա երկիրը չայ գաղթական գնալով, որ կայուածքի վրա որ բնակութիւն շինել են, իրանց կեանքն էլ ստրկութեան նուիրեցին: — Մտքա այս դժբաղդութեան հետ ուրիշ թշուառութիւն էլ ունեին, որ է հայրենի լեզուի չգիտեսայլը: — Այս վիճակիս մէջն են քաղաքաբնակներն էլ, իրանց քաղաքական երջանիկ վիճակովը. — Սրանից աւելի բարոյական թշուառութիւն չի լինիր:

Իմերէթու Մայրաքաղաքի մէջ ուր որ վաթսուն տուն չայ կայ, նրա աշխարհագրական յողուածը զրոյ՛ մեր կարգակից եղբայրը՝, կ'ամաչի ասել, որ վաթսուն տուն չայի մէջ հինգ մարդ չկայ հայերէն գիտեցող. ազգային լեզուի նշմարանք չգտնելէն ետքը՝ հայկազեան բարուց նշմարանքը կարո՛ղ է տեսնել բանասէրը, ոչ երբէք. — Այս կողմի զեղերի մէջ եղած չայերը Վրաց հետ խառը՝ Վրաց Եկեղեցւոյ ստրուկներն են:

Այս յողուածէն կը ժողովինը Վրաստանու հարաւային և հիւսիսային կողմի չայոց գումարը առ առաւելն երեք հազար տուն. Վրաստանի մայրաքաղաքի մէջ էլ 20000 բնակիչ չայ կան, բոլորը երեսուն հազար հաննք. և այս բաղդատութեամբ ասնք որ կէս բաժինը հայկական լեզուն կորցրած լինին. իսկ բարբը այս նկատմամբ և ոչ մէկի մօտ մնացած պիտի լինի:

Վրաստանը հարաւէն անմիջապէս սահմանակից է չայոց, թէ որ լեզուի և բարուց այսքան փոփոխութիւն կը գտնենք այն տեղի մեր ազգի մէջ, այս բաղդատութեամբն էլ կշռելու ենք Աղուանից աշխարհքը բնակող չայոց մէջ. այն ժամանակը կ'տեսնենք

² Եովհաննէս վարդապետ Արշարունի, որ համառօտ դրած էր Վրաստանի և Իմերէթու չայոց վրա աշխարհագրական գիտելիք ներկայ ժամանակիս:

որ Ազգային իշխանութիւնը որքան ոյժ և ներգործութիւն ունի ազգաց մտաւոր կարողութեանը վրա, որոնք որ անուամբ միայն կարող են ազգութիւն պահել և չունին իշխանութիւն, բայց թէ որի մէջ որ կ'ընակին:

Աղուանից աշխարհքին մէջ Հայոց դաղթականութիւնը այն ժամանակից կերելի, երբ որ ազգը իր համաշխարհական չուն կազմեց, բայց նրանց վրա ճիշդ մէկ դիպուած չէ պատմութիւլ, որպէս զի նրանց քաղաքական վիճակին վրա կարողանանք աչք ձգելու. միայն այս օրս՝ այս յայտնի է մեզ, որ բաւական բաղմութիւն աւճել է անդ մեր տարազիր գաղթականներէն, մինչև որ Տիֆլիսու Հայոց վիճակէն յետքը Վարաբաղու (Աղուանից) վիճակը տեղի ունի ազգային կառավարութեան ատեանների մէջ. և նոյն երկրի ժամանակակից անցքը պատմութեանց էջերին մէջ յաւերժանալուն Հայ Վարաբաղուց քաջութիւններովը Վարսից յարձակմանցը դէմ. միայն Շիրվանու երկրի մայրաքաղաքին մէջ կրեք հազար տուն են, Ռաբուայ և Վարբանդ ծովեղերեայ քաղաքների մէջ եղողներն էլ վաճառականութեան առաջին տեղն ունին:

Այս մասերի վրա այս ինչ կարող ենք որոշաբար ասել. որքան էլ որ սակաւութիւ լինին Վրաստանի մասերէն, ազգային լեզուն տակաւին պահած են բաց ՚ի Վարաբաղու դիւղերէն. թէ որ սրանք էլ մէկ ուրիշ խառնուրդ ընդունել են, հիմա ինչէն է որ Վրաստանէն աւելի գուրս եղող ազգը գոնէ ազգային մէկ յատկութիւնն էլ պահած է, երբ որ Հայաստանի սահմանամերձ եղածները երկուքն էլ կորցրել են: Ինձ կ'իթուի որ այս ներգործութիւնն էլ կրօնքէն յառաջ եկած է. ուր որ քրիստոնեայք մահմետականաց հետ խառն բնակել են, նոցա հետ կրօնքի վերաբերութիւն չունենալով, լեզուն էլ պահել են. իսկ ուր որ քրիստոնէից հետ բնակակից եղած են, կրօնքի յարաբերութեամբ էլ լեզուն թողել են:

Հայաստանի սահմանակից տեղերի Վրաստանի մէջ եղած Հայ բնակիչների վրա միայն կ'տեսնուի այս տեսակ տարբերութիւնը իր միւս ազգակից եղածներէն. — Մոլդաւիայի գաւառը եղած Ռեսարաբիայի Հայոց վրա առանձին կ'իտտիմք:

Իսկ Վրաստանի հարաւային գաւառների մէջ եղած Հայ բնակչաց վրա նոյնպէս սակաւ ծանօթութիւն կարող ենք տալ, որով նրանց քաղաքական վիճակը յայտնի կ'լինի. — Ռամբակաձոր, Վաղախ և Աօրի երկիրները իրանց հայկական անունովը Հայաստանի

աշխարհագրութեան մէջ այսպէս կ'կոչուին. Աշոցք, Տաշիրք և Պուգարք: Ազգային պատմութեան տեղեկութիւն ունեցողը պէտք է զիտեանայ որ սրանք Ռազրատունեաց թագաւորութեան ժամանակը նոյն իշխանութեան երկրի մասն էին. որոց մէջ մինչև հիմա կանդուն մնացած թագաւորաշէն վանքերը՝ մեր թագաւորաց մեծագործութեանցը վկայ կ'հանդիսանան: Այս երկրի բնակիչքը Ռազրատունի ձեռքի տակ եղած ժամանակը անշուշտ իրանց քաղաքական վիճակն էլ երկրի իշխանութեան հետ փոփոխական կ'անէին, նոցա կենաց ազատութիւնը կ'ապահովացնէին թագաւորական հրովարտակները. որոց կարգն է Ամբատ թագաւորի հրովարտակը վանքի կալուածոց և ապահովութեան համար տուած, որի ինքնաձեռագիրը Տփխիսու Արղութեանց շայ իշխանաւորաց թանգարանը կ'ըպրդարէ:

Արիւ հարիւր տարու չափ սոցա քաղաքական վիճակն էլ տեղափոխութիւն կրեց. բայց Աթաբէկի ժամանակաւը, սրանց ազատութիւնն էլ աւելի ապահովական էր. վասն զի՝ իրանց իշխանապետը շայոց գունդերով Այսց հրամանատարութեամբ շայաստանի ազատութեան դրօշակը Աբրահայ եղբրքը կանգնեց. — Առոփ այս աշխարհքի մայրաքաղաքը երկրին օրէնք տուաւ, և քաղաքական իշխանութեամբ Ակեղեցական կանոնների վրա բռնացաւ. իրեն հրամանները օրէնք էին բնակիչներին, և իր կամքը Ակեղեցոյ կառավարութեանը՝ կանոն, որ աւելի Ակեղեցական վիճակի մէջ կարէր տեղ գանել:

Ութևատաներորդ դարու մէջ՝ աւելի մթութիւն ունի այս տեղերի բնակչաց քաղաքական վիճակը, երբ որ աւելի պիտի լուտտփայլէր. բայց Այսց իշխանութեան անկման պատճառաւ շատ ժամանակ սրանք էլ հալածանաց և դերեխարութեան զոհ եղան, առաւել այն ժամանակը, երբ որ մէկ անգամ Պարսիկը, մէկ անգամ Տաճիկը երկիրը Այսց ձեռքէն յախշաակելու կ'վաղէր. շատ անգամ սրանք փոփոխակի Շիրակայ Տաճկաց մասն են անցել, և այն տեղեց էլ անդրադարձ, մինչև որ վերջին խաղաղութիւնը գտան Այսաստանը Ռուսաստանի հետ միանալովը:

Բնակիչքը այս տառապանաց ժամանակ ստացուածքը զրեթէ միայն կորցրին, երկիրը անբնակ չ'մնաց, երբ որ սահմանաւերձ գաւառները յարձակող զօրութեան հետ այս տեղ այն տեղ կանցնէր, ու վերստին կ'դառնար, սրանք իրանց տեղէն չ'շարժեցին. հի-

մա բնակիչներն են երկրին մէջ, երբ որ Շիրակ իր սահմանակից գաւառը հին ժողովուրդը խալառ տարազիր անկող պն հալածանքների ժամանակ, նորը սեղը փոխարինեց:

Այս գաւառներից ետքը կարգը Շիրակայ կը գայ, որ Արարատեան նահանգի երեւել կամ թէ առաջին գաւառներից մէկն է իր պարարտ ու արգաւանդահող անունովը. սրա ներկայ բնակչաց Հայերի արդի քաղաքական վիճակը ամենէն յետքը տեսնելու եմք, ըստ որում կարգով էլ այս վերջինն է. այլ միայն այժմ նրա առաջի վիճակը նկարելու ենք, երբ որ Ռուսաց իշխանութենէն յառաջ այս երկիրը Արաց կառավարութեան տակն էր:

Հերակլի թագաւորութեան վերջին օրերն էր, որ Շիրակայ արեւելեան մասին մէջ եղող Հայերը իրանց քաղաքական վիճակը վերստին Պարսից յարձակմամբ յեղափոխութեան մէջ ձգեցին, և իրանք նրանց ասպատակողներին առատ կողոպուտ տուին:— Քրիստոնեայ թագաւորը մէկ մահմէտականի ծառայութիւն վարձատրելու համար՝ քրիստոնէից գաւառն էլ նրան հաւատաց: Սայն թագաւորն էր որ Տիֆլիզու քաղաքական վիճակը ապահով պահելու համար, տարին երեսուն քառասուն տղայ տալ չուզեց Պարսից շահութեան դահին հետամուտ եղող խանին. և ահաւասիկ կը տեսնենք որ քառասուն մարդ չն տուող թագաւորը մէկ գաւառ ողջոյն մէկ ստակական պարսիկ կ'տայ, և այնպէս միւս պարսիկների նախանձը կ'շարժէ երկրի ու ժողովուրդըր վրա, որով և նրանց քաղաքական վերջովմանըր պատճառ կը լինի:

Ղահրիման անուն պարսիկին մէկը Հերակլի թշնամեաց վրա յաղթութիւն անելով, Շիրակայ արեւելեան մասը իրան սեպհական ժառանգութիւն կառնու թագաւորէն. երբ որ գաւառի հարաւային ամրութեանց բարձունքները իրան ազաստանատեղի կ'անէ թշնամեաց երեսէն, Արեւան նստող Մահմատ խանը Ղահրիմանի ամրութեանց անառիկ լինելը լսելով, նրա բարձունքներն էլ խոնարհեցնել կուղէ. ուստի մէկ գունդ զօրքով Քեռայպայի անունով խանը կուղարկէ Շիրակ: Սա կը գայ Ղահրիմանի ամրութիւնները քակելէն ետքը, Հայոց սրբաշէն տաճարներն էլ միատեղ կը կործանէ. հազիւ թէ յաղթականը յաղթուողը աղաչանացը լսելով, կ'ինայէ Հառիճոյ (Վփչաղայ) երկու նորաշէն եկեղեցիներն, երբ սուրբ յարութեան հին տաճարը հիմնայատակ էր արել:

Հայաստանի մէջ կ'տեսնենք որ պատերազմի ժամանակ վերջին

սպաստանարան կ'ըննի բնակչաց՝ իրանց նախնեաց վիճարդեան ձեռագործ տաճարները, այս գրութեամբ երբ որ մէկ անաէր ժողովրդեան սպաստանները թշնամու առաջը կործանվի, իրանց վիճակն էլ ի՛նչ տեսակ սասանութեանց մէջ կ'ըննի. և տառապանքն ու տուած աւարը որպիսի կանգունով չստիկու է:

Այս թափառական շայերին եղաւ ժամանակ էլ, այս միջոցին որ դարձեալ երկրի բռնակալների խռովութեանց երեսէն առաջին գաղթած տեղէն, երկրորդ գաղթականութիւն էլ արին. դիր այս տառապեալների վրա երրորդ գաղթականութիւն էլ նորէն իրանց տեղը դառնալու, քանի՞ դոյաթափութիւն, քանի՞ հալածանք և քանի՞ գերութիւն կ'տեսնես սրանց մէջ. — Ահա՛ ութեամսներորդ դարուն զիպուածքը ՚ի շայաստան:

Այս պատճառէն էր որ Շիրակայ այս մասին մէջ նախնի բնակիչք չէին մնացել, կամիմ ասել, նրանց երկրորդ գաղթականութենէն. երբ Այաստանը կ'իշխէր սրան, կար միջոց էլ, որ սրա բնակիչները նոյն իսկ Այրաց իշխանութեան տակ Պարսից երկիւղէն Շիրակայ արևմտեան մասը Տաճկաց իշխանութեան տակն անցան: Թէ և շայաստանի սպաստութենէն յառաջ այս գաւառը Ռուսաց ձեռքն էր, բայց հաղիւ բնակչաց տասնէն մէկը կար. այս ամայութիւնը պատճառ եղաւ, որ Տաճկաց երկրի գաղթականները Շիրակայ արևելեան բաժնին մէջ բնակութիւն գտան, որոց քաղաքական վիճակն էլ վերջին մասին մէջ:

Այս գաւառէն կանցնինք ՚ի Այաստան և անտի ՚ի հարաւային Ռուսիա, և ապա միւս գաւառները, որոց անուանքը վերնագրին մէջ գրոջմուած են:

1837 թուականի սկիզբները, Շիրակը եօթը տարուան մէջ հաղիւ թէ կը ժպտար այս նորեկ գաղթական ժողովրդովք. կարծես թէ գարնան մարգագեանի նման նոր կը կանաչազարդէր իր արեգական ջերմութեամբ իրեն դալարի մարգերը. և այս խորթացած բնակիչքը հայրենի բնդարձակ հովտի երեսը երամ երամ կը մակաղէին:



19648-19650

2013 3143

19648-19650

2013 3143

